ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- ապրիլի 2025 թվականի №--- -Ա

«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ 25 ՏՈԿՈՍԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԷՖԱՐՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի փետրվարի 13-ի №1144-2025, փետրվարի 14-ի №1192-2025 և մարտի 3-ի №1536-2025 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ իր կանոնադրական կապիտալի 25 տոկոսը կազմող՝ ԷՖԷսԷլ Սոլար Էս. Էլ.-ին պատկանող արտոնյալ անվանական բաժնետոմսերն Ընկերության կանոնադրական կապիտալի 75 տոկոսը կազմող հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր ԷՖԱրՎի Լա Պրովիդենսիա Էս. Էլ.-ին օտարելու գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով, 2025 թվականի մարտի 4-ի №ՄՄ/34.1-Մ2-2/956-2025 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2025 թվականի մարտի 28-ի №02/12.63/10199-2025 գրությամբ Հանձնաժողով են ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումները՝ Գործարքի մասով առարկություններ չունենալու վերաբերյալ,

դ) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը որոշում է.

1. Համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալի 25 տոկոսը կազմող՝ էֆէսէլ Սոլար էս. էլ.-ին պատկանող արտոնյալ անվանական բաժնետոմսերն Ընկերության կանոնադրական կապիտալի 75 տոկոսը կազմող հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր էֆԱրՎի Լա Պրովիդենսիա էս. էլ.-ին օտարելու գործարքի կնքմանը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո անհրաժեշտ է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
--- ապրիլի 2025թ.